ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆ

«07» 10 2025 թ. Թիվ 231-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 8-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2014 թվականի նոյեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կոլեգիայի գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 8-Ա հրամանում (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) հրամանի նախաբանում «ծառայողների» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց» բառերով.

2) հրամանի հավելվածի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Կոլեգիան կազմված է նախագահից և 11 անդամից: Կոլեգիայի նախագահն է քննչական կոմիտեի նախագահը, ի պաշտոնե անդամներն են՝ քննչական կոմիտեի նախագահի տեղակալները, քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետը, քննչական կոմիտեի հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչության (այսուհետ՝ վարչություն) պետը, քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի

հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության պետը, քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության պետը, ինչպես նաև քննչական կոմիտեի նախագահի կողմից նշանակվող քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող այլ անձինք:».

3) հրամանի հավելվածի 11-րդ կետում «կոմիտեի մարմինների և ստորաբաժանումների» բառերը փոխարինել «քննչական կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների (այսուհետ՝ ստորաբաժանումներ)» բառերով.

4) հրամանի հավելվածի 17-րդ կետից հանել «մարմնի կամ» բառերը.

5) հրամանի հավելվածի 18-րդ, 37-րդ և 39-րդ կետերում «մարմիններ և ստորաբաժանումներ» բառերն՝ իրենց համապատասխան հոլովաձևերով փոխարինել «ստորաբաժանումներ» բառով՝ իր համապատասխան հոլովաձևերով.

6) հրամանի հավելվածի 29-րդ կետում «ծառայողի» բառը փոխարինել «ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի» բառերով.

7) հրամանի հավելվածի 32-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«32. Կոլեգիայի որոշումների կատարումն ըստ անհրաժեշտության ապահովվում է քննչական կոմիտեի նախագահի հրամաններով:».

8) հրամանի հավելվածի 37-րդ կետում «ծառայողներին» բառը փոխարինել «ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց» բառերով:

2. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կոլեգիայի անդամներին և քարտուղարին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի խորհրդականներին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին:

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ